

ԳԵՎՈՐԳ ՅԱԶՆՃՅԱՆ

# ԽԵՂԱԹՅՈՒՐՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

*(ՊԱՏՄ. ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆԻ  
ՄԻ ԳՐԱՎՈՐ ԵԼՈՒՅԹԻ ԱՌԻԹՈՎ)*

ԵՐԵՎԱՆ - 2008

9(47.925)

3-16

ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՆՅԱՆ

## ԽԵՂԱԹՅՈՒՐՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

(ՊԱՏՄ. ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆԻ  
ՄԻ ԳՐԱՎՈՐ ԵԼՈՒՅԹԻ ԱՌԻԹՈՎ)

4097



ԵՐԵՎԱՆ

Հեղինակային հրատարակություն

2008

ՀՏԴ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (23)  
3 - 167

*Խմբագիր՝ Հասմիկ Գուլակյան*

Յազրճյան Գևորգ

3 - 167 **Խեղաթյուրման տեխնոլոգիան.**- (պատմ. գիտ. թեկնածու Վանիկ Վիրաբյանի մի գրավոր ելույթի առիթով).- Եր.: Հեղինակային հրատարակություն, 2008.- 24 էջ:

Գրքույկում հանգամանալիորեն ներկայացվել են պատմ. գիտ. թեկնածու Վանիկ Վիրաբյանի «Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ» (Երեւան, 2007) ժողովածուի մի «հետգրության» մեջ հեղինակի կատարած խեղաթյուրումները՝ համարժեք պատասխաններով:

Գրքույկը նախատեսված է պատմության ֆակուլտետների ուսանողների, պատմաբանների, հայ հասարակական մտքի հարցերով հետաքրքրվողների, հայրենական եւ սփյուռքահայ զանգրվածային լրատվամիջոցների եւ ընթերցող լայն շրջանակների համար:

ISBN 978-9939-53-048-2

ԳՄԴ 63.3 (23)

© Գեւորգ Յազրճյան, 2008

## Խեղաթյուրման տեխնոլոգիան

(պատմ. գիտ. թեկնածու Վանիկ Վիրաբյանի մի գրավոր ելույթի առիթով)

Իմ սուր խոսքերից ճանաչեց նա ինձ,  
ես ականջներից իմացա նրան:

*Ալեքսանդր Պուշկին*

2002 թ. ապրիլին վերահրատարակել են եկեղեցական եւ մշակութային մեծ գործիչ, ականավոր մանկավարժ եւ հայագետ, երջանկահիշատակ Գարեգին Հովսեփյանցի հուշերը Կարսի 1920 թ. հոկտեմբերի 30-ի խայտառակ անկման հանգամանքների մասին: Դեռ այն ժամանակ էի մտադրվել ըստ էության քննել այդ անօրինակ պարտության խորքային պատճառները՝ դրանց վերհանման միջոցով հայ հասարակությանն զգուշացնելու «Դէր Ջօրէն ետք հայ ժողովուրդին կրած մեծագոյն աղէտի» (գնահատականը սփյուռքահայ ականավոր գործիչ Անդրանիկ Ճառուկյանին է) կրկնությունից, որը հավասարազոր է լինելու Հայաստանի, ու ի վերջո, հայության վերացմանը:

Առիթը ներկայացավ, երբ քաղաքագիտության դոկտոր Արմեն Այվազյանի առաջարկով հեղինակեցի «Կարսի անկման բուն պատճառները (1920 թ.)» գիտական ուսումնասիրությունը, որը տեղ գտավ նրա կազմած ու խմբագրած «Ռազմավարության եւ անվտանգության հարցեր» ժողովածուում (2007 թ., մարտ): Նյութը հայրենի եւ սփյուռքահայ ընթերցողներին հասու դարձնելու նպատակով, աննշան փոփոխություններով, սակայն արդեն գիտահամրամատչելի տարբերակով լույս ընծայեցի նույն թվականի մայիսի սկզբին, Երեւանում, «Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները» վերնագրով:

Ինչպես եւ սպասում էի, այս հրապարակումներն արժանացան տրամագծորեն հակառակ գնահատականների: Ազգային էությանն սպառնացող վտանգներից խորապես մտահոգ հայերն այնտեղ տեսան ցավ ու սհազանգ՝ չկրկնելու մեր սխալները, իսկ ուրիշներ, հայելու մեջ նայելու եւ սեփական տգեղություններն ի ցույց տալու իմ համարձակությունից սարսափած, սվիններով դիմավորեցին այդ հրապարակումները: Իսկ Մինսկում լույս տեսնող ռուսալեզու «Անիվ» հայկական հանդեսը, 2007 թ. իր 3-րդ համարից սկսած, թարգմանաբար հատված առ հատված ներկայացնում է այս ուսումնասիրությունը խմբագրության լրացումներով, մեկնաբանություններով, սեփական առաջարկներով, երբեմն էլ որոշ քննադատություններով, որոնց մի զգալի մասն անընդունելի է: Ակնհայտ է

«Անիվի» խմբագրության կառուցողական մոտեցումը տվյալ հարցին եւ իմ աշխատանքում տեղ գտած որոշակի բացթողումներին, խմբագրության կարծիքով՝ գերազնահատումներին կամ թերազնահատումներին եւ այլն:

Յավոք, նույնը չի կարելի ասել մեկ այլ գրավոր արձագանքի մասին: Արդարեւ, 2007 թ. հուլիսի 10-ին տպագրության ստորագրած իր «Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ» հոդվածների ժողովածու-գրքույկում Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պատմության եւ քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վանիկ Վիրաբյանն իզուր է փորձում հիմնովին արժեզրկել իմ կատարած աշխատանքը՝ չխորշելով դիմել պատմաբանի համար անթույլատրելի միջոցների, մասնավորապես խեղաթյուրումների: Ավելին՝ ինձ հասցեագրում է նաեւ անչափ վիրավորական՝ «պատվեր կատարողի» մեղադրանք, որի համար հաստատ պատասխան է տալու (տե՛ս այս գրքույկի հավելվածը):

Կարող էի արհամարհել Վ. Վիրաբյանն ու նրա «տեսակետները» եւ անցնել: Սակայն դրանք անպատասխան թողնելը նշանակելու էր լռելյայն համաձայնել նրա հերյուրանքներին: Հետեւաբար, հակառակ հույժ բազմազբաղ վիճակիս, ստիպված եմ որոշ ժամանակ զոհել Վ. Վիրաբյանի՝ ինձ վերագրած անհիմն կամ խեղաթյուրված «տեսակետներին» գրավոր պատասխանելու համար:

Իմ պատասխանները ներկայացնում եմ գրքույկում նրա բերած «փաստարկների» եւ «դատողությունների» հաջորդականությամբ:

Մինչ այդ՝ մեկ ուշագրավ նկատառում:

Պարոն Վանիկ Վիրաբյանը (այսուհետ՝ Վ. Վ.: Խնդրում եմ չչփոթել Վլադիմիր Վիտցկու կամ մեկ ուրիշ ականավոր անհատի հետ) իմ ուսումնասիրությանն արձագանքել է հապշտապ: Դրա ակնհայտ ապացույցը նրա անդրադարձի նույնիսկ ձեւն է՝ էջատակի մի «հետգրություն» (այն էլ՝ երկու մասի բաժանված. էջ 46-47 եւ էջ 64-73): Ուշագրավ է, որ Ա-5 չափսի ընդամենը 100 էջ ծավալով գրքույկի 10 տոկոսը Վ. Վ.-ն հատկացրել է այդ հետգրությանը... Հիրավի, Գիմեսի գրքում գրանցվելու արժանի մի մրցանիշ, որն այդ իմաստով միակը չէ այս ժողովածուի մեջ...

Անցնենք Վ. Վ.-ի «գոհարների» փորձաքննությանը:

- Վ. Վ.-ն գրում է. «...դեռ մանրագինն եւ խորքային անդրադարձ կկատարենք հայկական հետախուզական ծառայության կազմակերպման հիմնախնդրին Առաջին Հանրապետության տարիներին» (էջ 46):

Տվյալ հարցի մասին 1999-2006 թթ. չորս մենագրություն հրատարակած հեղինակն այս կերպ փաստում է, որ ինքը դեռեւս «մանրագինն եւ խորքային անդրադարձ» չի կատարել տվյալ հիմնախնդրին. «անկեղծ» խոստովանություն, որն, անշուշտ, չի խոսում Վ. Վ.-ի օգտին:

- Վ. Վ.-ն վերոհիշյալին անմիջապես ավելացնում է, թե իմ ուսումնասիրության հրատարակման պատճառով ինքը «հարկ է համարում» տալ «մի շարք սկզբունքային նշանակություն ունեցող պարզաբանումներ եւ էական ճշգրտումներ» ու հավակնում «արդի հայ պատմագիտությամբ առաջադրված մի շարք սպիտակ էջեր» «առավել համակողմանի եւ լիարժեք» (էջ 47) լուսաբանողի լուսապսակին:

Մի՞թե կարելի է «համակողմանի եւ լիարժեք լուսաբանել»... հետգրությամբ:

- Վ. Վ.-ն «կարծում» է, որ «Գ. Յազըճյանը, առանց լուրջ եւ համակողմանի հիմնավորման, գործնականում հենվել է ընդամենը մեր կողմից 1999 թ. հրատարակված եւ Առաջին Հանրապետության հատուկ ծառայություններին նվիրված մի գրքույկի տվյալների վրա», եւ «լիովին ստվերում են թողնվել մեր կողմից 2003-2004 թթ. հրատարակված մենագրությունները եւ ... հրապարակումները տարբեր ամսագրերում» (էջ 47):

Նախ՝ լավ կլիներ, եթե իր գրքույկի սկզբում հայոց լեզվի էական նշանակությունը գնահատող Վ. Վ.-ն խուսափեր օտարաբանություններից («կողմից» բառի անհարկի գործածություն կրավորական սեռի բայի հետ):

Երկրորդ՝ իր շտապողականության պատճառով վերոհիշյալ տողերի հեղինակը «մոռացել» է ... իր իսկ մենագրությունների հրատարակման ճշգրիտ թվականները: Այսպես՝ իր նշած «մի գրքույկը» (զարմանալի է, որ «մի գրքույկ» ասելով նա թերազնահատում է իր իսկ առաջին մենագրության արժեքը), լույս է տեսել 1998 եւ ոչ թե 1999 թվականին (այս սխալը կրկնել է շապկի վրա տպագրված մենագրությունների ցանկում): Մյուս կողմից՝ հեղինակի՝ նույն թեմայով վերջին երկու մենագրությունները լույս են տեսել 2006 թվականին (դա նշել է հիշյալ ցանկում), որը, ինչպես հայտնի է, «2003-2004 թթ.»-ից տարբեր տարեթիվ է (միզուցե ըստ Վ. Վ.-ի՝ 2003-2004թթ.=2006թ.): Նա չի էլ նկատել, որ վերոհիշյալ տողերից հետո փակագծերում իր մենագրություններից մեկի հրատարակման տարեթիվ է նշել 2006-ը: Այս փաստերն էլ հօգուտ Վ. Վ.-ի չեն:

- Ստիպված ենք Վ. Վ.-ի հետ 47-րդ էջից ցատկել 64-րդ էջը: Նա գրում է, որ իր առաջին գրքույկից հետո «մեր կողմից կատարվել են նախորդ հրապարակումներում արժարժված մի շարք տեսակետների լուրջ ճշգրտումներ եւ վերանայումներ» (էջ 64):

Իհարկե, միշտ էլ պետք է գնահատել, երբ որեւէ մեկը վերանայում է իր թերի կամ սխալ տեսակետները: Այս ինքնախոստովանությունը Վ. Վ.-ի «հետգրության» գրեթե միակ անսխալական տեսակետն է: Սակայն ես օգտվել եմ նրա հենց առաջին գրքույկից, ինչն էլ հարուցել է նրա հեղինակի խոր ... վրդովմունքը: Պարզաբանեմ: Եթե Վ. Վ.-ն իր առաջին գրքույկում թերի կամ սխալ տեսակետներ է հայտնել, դրա պատասխանատուն ինքն է միմիայն: Գուցե 1998 թվականին տպագրված «Հայաստանի

առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թթ.» գրքույկի հեղինակն էլ ինքը չէ: Թող բարի լինի, ուրեմն, այդ հրատարակության պատասխանատվությունը կրելու: Մյուս կողմից՝ Վ. Վ.-ն վրդովվել է նաև, որ չեն օգտվել իր հետագա հրապարակումներից: Նորից պարզաբանեմ: Պարտավոր չէի օգտվելու դրանցից, քանի որ իմ միակ խնդիրը առաջին հանրապետության հետախուզության եւ հակահետախուզության գործունեության արդյունավետության հարցը քննարկելը չի եղել: Դա նշել եմ որպես Կարսի եւ հետագա պարտությունների 28 պատճառներից մեկը եւ ոչ թե միակը կամ զլխավոր պատճառներից մեկը:

- Վ. Վ.-ն այնուհետեւ գրում է. «Գ. Յազըճյանը, մեղմ ասած՝ ոչ ճշգրիտ, էմոցիոնալ եւ տարօրինակ կերպով անհամակողմանի, միանգամայն մակերեսային, չափազանց անձնավորված եւ «պատվերային» բընույթ կրող եզրակացության հայկական հետախուզական ծառայության չգոյության կամ նրա կողմից ծավալած «անբավարար», «անչափ անգույն, անչափ ողորմելի» գործունեության մասին...» (էջ 64):

Մի կողմ թողնելով այստեղ եւս դրսեւորած օտարաբանությունը, հայտնեն, որ լեզվական այս «զոհարը» նույնությամբ մեջքերել եմ Վ. Վ.-ի «Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ» գրքույկից: Անհարմար է, որ հայ պատմաբանի հայերեն շարադրանքը կաղում է... Սա՝ իմիջիայլոց: Անիմաստ եմ համարում պատասխանել «անհամակողմանի», «միանգամայն մակերեսային» եւ այլ բնութագրումներին, որոնք պարզապես չեն համապատասխանում իրականությանը (Կարսի անկման գաղափարական, ռազմական, ռազմահոգեբանական, բարոյափոխության եւ վարչաիրավական բնույթի 28 խորքային պատճառների ներկայացումը բավական է՝ ջրելու Վիրաբյանի այս հերյուրանքը): «Պատվերի» մասին ինչպես արդեն նշել եմ, ընթերցողը կկարդա սույն գրքույկի հավելվածում:

Ինչ վերաբերում է հայկական հատուկ ծառայությունների գործունեությանը տրված գնահատականներին, Վ. Վ.-ն անբարեխղճորեն ապակողմնորոշում է ընթերցողին: Իրականում այդպես ոչ թե ես եմ գնահատել («անբավարար» եւ այլն), այլ այդ անցքերին ականատեսները, երբեմն էլ մասնակիցները՝ Վահան Արծրունին, Ստեփան Ղորղանյանը, Կարո Սասունին եւ այլք (ի դեպ, վերջին երկուսը տվյալ ժամանակահատվածում եղել են համապատասխանաբար՝ Վանանդի (Կարսի) եւ Շիրակի նահանգապետներ, այսինքն՝ լավատեղյակ բարձրաստիճան պետական պաշտոնատարներ):

- Վ. Վ.-ն ինձ է վերագրում այն եզրակացությունը, թե «իբր հենց այդ տարիներին Հայաստանի Հանրապետությունն ամենեւին էլ կազմակերպված պետություն չի հանդիսացել», ավելացնելով՝ որ ես այդ եզրակացությանը հասել եմ «առանց դրա մեջ իրապես խորամուխ լինելու» (էջ 64):

Իմ գրքույկի 48-րդ էջի ծանոթագրության մեջ հստակորեն գրել եմ. «Եթե այսպիսիք էին այդ ծառայությունների աշխատանքի որակն ու արդիւնաւետութիւնը, ապա ցաւով պէտք է հաստատել, որ ՀՀ-ն կազմակերպուած պետութիւն չի եղել»: Ուշադիր ընթերցողը կնկատի, թե Վ. Վ.-ի սիրած բառերից «ամենեւինը» այս նախադասության մեջ չեն էլ գործածել: Մյուս կողմից՝ Վ. Վ.-ի տեսակետը, թե ես այդ եզրակացությանն եմ հանգել՝ ելնելով միայն հատուկ ծառայությունների աշխատանքից եւ «առանց խորամուխ լինելու», հերթական հերյուրանք է, քանի որ այդ եզրակացությունը հիմնվել է Հայաստանի առաջին Հանրապետության պետական կյանքի տարբեր երեսակների համակողմանի ուսումնասիրության վրա:

- Վ. Վ.-ն «ոչ ճիշտ է համարում» հայկական հետախուզության մասին Հայ Գնդունու կարծիքը (էջ 64): Այսինքն՝ նա եւ Հայ Գնդունին տարակարծիք են, իսկ դա իմ լուծելիք խնդիրը չէ: Ըստ էության Վ. Վ.-ն թերագնահատում է նաև ՀՀ խնամատարության նախարար եւ Կարսի ռազմաճակատում կառավարության լիազոր ներկայացուցիչ Արտաշես Բաբայանի վկայությունը՝ ի ցույց դնելով իր մենագրություններում բերված նյութերը (էջ 64-65): Վ. Վ.-ն կարծում է՝ «պարտադիր» չէր, որ հուշագիրներից Հայ Գնդունին, Արտ. Բաբայանը եւ Վահե Արծրունին «քաջատեղյակ, լավ տեղեկացված լինեին» ՀՀ հետախուզական ծառայության գործունեությանը (էջ 65): Լավ, Ստ. Ղորղանյանն ու Կարո Սասունին էլ անտեղյակ կամ, առնվազն, վատ տեղեկացված պետական գործիչներ էին...

- Այնուհետեւ Վ. Վ.-ն շարունակում է. «...միայն սեփական իմացականությամբ եւ հուզերանգային տրամադրվածությամբ, հուշագիր-ականատեսների կողմնակալ եւ երբեմն էլ ոչ օբյեկտիվության ձգտող դատողականությամբ /դա, իհարկե, չի կարող բոլոր հուշագիրների ու ականատեսների վրա տարածել/ դատել, անաչառ դատավորի դեր կատարել՝ հավակնելով արտահայտել վերանայման եւ ճշգրտումների ոչ ենթակա «տեսակետներ» պատմաքաղաքական կարեւոր իրադարձությունների ու անցքերի մասին, անլուրջ զբաղմունք է պատմաբանի համար» (էջ 65):

Իմ ուսումնասիրության ընթերցողը ողջ շարադրանքում կգտնի միայն մեկ ճշմարտության հաստատում, դա էլ ոչ թե իմ, այլ Գարեգին Նժդեհինն է... Իսկ Վ. Վ.-ի տված «գնահատականները», մեղմ ասած, նրա վառ երեւակայության ծնունդն են:

- Վ. Վ.-ն «զորս պատուիրեսցէ» ինձ «մշակելուց» հետո շարունակում է. «Ներկայացված տեսակետը միանգամայն անտեղի է, եւ քաղաքականապես ու պատմականորեն արդարացված չէ, իսկ ապացուցողական եւ հիմնավորման հիմքը շատ թույլ է, այն էապես կաղում է եւ հեճակների կարիք է զգում...» (էջ 65-66):

Նախ՝ եթե այստեղ ինչ-որ բան կաղում է, ապա միանշանակ Վ. Վ.-ի հայերեն շարադրանքն է (նրա նախադասությունների երկարությունը երբեմն հասնում է 1 էջի, իսկ ասելիքը հասկանալու համար անհրաժեշտ է կոլեկտիվ, համառ եւ տքնաշան աշխատանք...): Իրականում չկարողացա պարզել, թե իմ ո՞ր տեսակետի մասին է Վ. Վ.-ի ակնարկը: Եթե առաջին հանրապետության կազմակերպված պետություն լինել-չլինելու մասին է խոսքը, այդ մասին վերելում արդեն գրել եմ:

- Վ. Վ.-ն այնուհետեւ գրում է ՅՅ հատուկ ծառայությունների կայացման բարդ գործընթացի մասին, հայտնում, որ նրանք «զգալի աշխատանք են ծավալել» եւ այլն (էջ 66-67), սակայն նրանց հայթայթած տեղեկությունները «մի շարք, դեռեւս լիովին չբացահայտված պատճառներով, շատ դեպքերում էլ այդ օրերի ՅՅ քաղաքացիական եւ ռազմաքաղաքական ղեկավարության բացահայտ կրավորական դիրքորոշման, անտարբերության եւ բազմաթիվ այլ պատճառներով, գրեթե լիովին անտեսվել են...» (էջ 67):

Ընթերցողը որեւէ տարակարծություն կհայտնաբերի՞ Վ. Վ.-ի այս տեսակետի եւ իմ գրքույկի հետեւյալ տողերի մեջ. «Մէկ այլ ողբերգական փաստ է այն, որ հատուկներն ղեկավարում, երբ հայկական հետախուզութեանը յաջողում էր ինչ-որ կարեւոր տեղեկութիւններ կորզել, քաղաքական ղեկավարութիւնը պատշաճ լրջութեամբ չէր վերաբերում դրանց» («Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները», էջ 48): Նույն էջում՝ ծանոթագրության մեջ ավելացրել եմ. «Այս մասին բազմիցս վկայում է նաեւ Ստեփան Դորդանեանը իր յուշերում՝ ՅՅ ղեկավարութեանը մեղադրելով իր ձեռք գցած հետախուզական բնոյթի տեղեկութիւնները անտեսելու կամ դրանք հաւաստիութեանը կասկածելու համար: Նոյնը հաստատում է նաեւ պատմաբան Վանիկ Վիրաբեանը՝ Յայաստանի առաջին Յանրապետութեան յատուկ ծառայութիւններին նուիրուած իր աշխատութիւններում»: Վ. Վ.-ն ինքն էլ, իր այս «հետգրության» մեջ արձանագրում է, թե «երբեմն էլ բարձիթողի եւ անտիրական, անխնամ եւ անուշադրության մատնված վիճակ» է եղել ՅՅ հատուկ ծառայությունների աշխատանքում («Յայոց պատմության հիմնահարցերի շուրջ», էջ 67): Մի՞թե այս եւ հուշագիրների «անբաւարար», «ողբալի» եւ մյուս որակումները հավասարազոր չեն: Ի՞նչ է որոնում Վ. Վ.-ն իմ գրքույկում, որ չի գտնում...

- Վ. Վ.-ն իր սովորական ոճով գրում է «խորհրդային համակարգի գոյության տարիներին» առաջացած ինչ-որ «միտումնավորության» մասին, «երբ ներկայացվող մեղադրանքները մեծամասամբ հիմնավորվում են իրենց նկատմամբ քննադատական վերաբերմունք պահանջող, այսպէս կոչված «Յուշերի» կամ հուշագրական բնույթ կրող գրականության հենքի վրա» (էջ 67-68):

Այս քննադատությունը նա չպետք է գոնե ինձ ուղղեր. հայտնի է, որ նման «մեթոդաբանությունը» ես չեմ սովորել խորհրդային տարիներին

(Վ. Վ.-ն ինքն է պատմագիտություն ուսանել եւ թեկնածուական պաշտպանել այդ տարիներին. տողերիս հեղինակին նույն վարչակարգը 1988 թ. հոկտեմբերին արտաքսել է երկրից՝ Արցախյան շարժմանը եռանդուն մասնակցություն ունենալու «ծանր» հանցանքի համար): Մյուս կողմից՝ միշտ էլ քննադատաբար եւ կասկածանքով եմ մոտեցել եւ այսօր էլ վերապահությամբ եմ վերաբերվում ոչ միայն հուշերին, այլեւ փաստաթղթերին (իմ համոզմամբ՝ նման մոտեցումը գիտական մեթոդի անբաժան մասն է): Օրինակ՝ Ստեփան Դորդանյանի՝ ՅՅ բանակի բարձրաստիճան գինվորականների մասին բացասական, հաճախ չափազանցյալ կարծիքները միշտ էլ համեմատել եմ այլ աղբյուրների տեղեկությունների հետ եւ երբեք հալած յուրի տեղ չեմ ընդունել...

- Վ. Վ.-ն այնուհետեւ հրամցում է լեզվափոխության մասին «զուլխգործոց». «...եւ Անտանտի գծով փոքր եղբայրակցի լիցքերը մարդկային-պրոֆեսիոնալ բարեմասնությունների հարթության վրա փոխադրելը...» (էջ 68):

Խնդրանքով դիմում եմ հայ մասնագետներին. «Աստուծո սիրույն, բարի եղէք վերծանել հայատառ այս բառակույտի իմաստը, այլպէս չեմ կարող պատասխանել...»: Ի դեպ, կյանքումս առաջին անգամ եմ հանդիպում «փոքր եղբայրակից» արտահայտությանը, որը, պարզվում է, ինչ-որ «լիցքեր» էլ ունի...

- Նկատի ունենալով «հոգեբանական-ոգու եւ կամքի անկման գործոնները»՝ Վ. Վ.-ն գրում է. «...տեղին չէ բացարձակացնել մի կարգի արժեքները, նսեմացնելով մյուսները»: Նա թվարկում է «մյուսներից» մի քանիսը, այդ թվում՝ «տգետ վարդապետները նույնպէս» եւ անմիջապէս հավելում. «...սակայն անտեսել համաշխարհային հզոր գործընթացները՝ տեղին չէ եւ պատմաքաղաքական առումով ամենեւին էլ չի կարող արդարացվել» (էջ 68):

Վ. Վ.-ն վերոհիշյալ տողերում եւս դիմել է իր սիրած հնարքին՝ իր սարքած կաղապարի մեջ իմ գաղափարները տեղավորելու ամուլ աշխատանքին: Իմ մեմագրության մեջ երբեք չեմ բացարձակացրել որեւէ գործոն, այդ թվում՝ «հոգեբանական-ոգու եւ կամքի գործոնները»: Խորքային պատճառների քննարկման սկզբում բավական հստակ գրել եմ. «Գաղափարական եւ ոգեղէն ոլորտներով պայմանաւորուած պատճառները համարում ենք որոշիչ եւ առաջնային: Դրանց բացակայութիւնից կամ թուլութիւնից են ածանցւում միւս բոլոր պատճառները» (էջ 22): Ես ի՞նչ մեղք ունեմ, որ կան վանիկվիրաբյաններ, որոնց համար «որոշիչն» ու «առաջնայինը» հոմանիշ են «բացարձակին»... Երկրորդ՝ անհասկանալի է «տրգետ վարդապետների» հարցը: Իմ ուսումնասիրության մեջ հիշատակում եմ ընդամենը երեք եկեղեցականի՝ Անենայն Յայոց կաթողիկոս Գեւորգ Ե Սուրենյանցին, Կարսի քահանա տեր Կորյուն Քոթանջյանին եւ Գարեգին եպս. Յովսէփյանցին: Վեհափառ հայրապետին որեւէ զննատակն չեմ

տվել, քահանայի վերաբերյալ «արժանահաւատ աղբիւր» որակումից (էջ 46) բացի որեւէ բնութագրական չեն գործածել, իսկ Յովսէփյանցի նկատմամբ իմ վերաբերմունքը եղել է եւ է համարյա պաշտամունքի հասնող պատկառանքը: Իսկ թե որտեղի՞ց է Վ. Վ.-ն հորինել «տգետ վարդապետների» հեքիաթը, միայն իրեն եւ իր Աստուծուն է հայտնի:

Ինչ վերաբերում է նրա վերջին դատողությանը, համաձայն եմ՝ Կարսի եւ ՀՀ անկման գործընթացները հարկավոր է քննարկել համաշխարհային գործընթացների համաշարադրանքում: Պարզապէս Վ. Վ.-ն կամ ուշադիր չի ընթերցել, կամ էլ շուռ է տալիս փաստը: Ես գրել եմ. «Հակառակ Կարսի եւ ընդհանրապէս առաջին հանրապետութեան անկման մասին պատմագիտական ու յուշագրական մեծածաւալ գրականութեան առկայութեան, մեր կարծիքով, հայ պատմագիտական ու քաղաքական միտքը այս իրադարձութիւններին առ այսօր ճշգրիտ գնահատականներ չի տուել: Ուշադրութիւնը առաւելաբար սեւեռուել է անկումների քաղաքական, մասնաւորաբար արտաքին եւ դիւանագիտական պատճառների վրայ՝ յետին պլան մղելով ներքին՝ գաղափարական, ռազմական, ռազմահոգեբանական, վարչաիրաւական եւ բարոյահոգեբանական պատճառները, որոնք էլ իրականում վճռորոշն էին, յատկապէս առաջինները» (էջ 7): Իմ գրքույկի ներածության ավարտին հստակեցրել եմ. «Քննարկելով Կարսի անկման եւ դրան յաջորդած ՀՀ կործանման պատճառները, մենք քննարկելու ենք առաւելաբար գաղափարական, զուտ ռազմական եւ բարոյահոգեբանական բնոյթի պատճառները (իրենց ենթաբաժանումներով), թէւ երբեմն անդրադառնալու ենք այլ բնոյթի պատճառների, որովհետեւ բոլոր գործոնները օրգանապէս միահիւսուած են» (էջ 22):

Ի՞նչն է այստեղ անհասկանալի: Ավելին՝ արտաքին քաղաքական եւ դիվանագիտական գործոնին անդրադարձել եմ իմ ուսումնասիրության «Օտարի վրայ յոյսը դնելը» ենթաբաժնում (էջ 33-35)՝ այն ընդգրկելով Կարսի անկման գաղափարական պատճառների շարքում: Արտաքին քաղաքական եւ դիվանագիտական կտրվածքներով խնդրի ներկայացման եւ քննարկման վերջին օրինակներից է պատմ. գիտ. թեկնածու Կորիճ Սարգսյանի «Հայաստանը համաշխարհային հեղափոխության արեւելյան խաչմերուկում» աշխատությունը (2007 թ.), որը մի հաջող փորձ է՝ ներկայացնելու այս բարդ հարցի հիմնականում սովետական ուղղվածությունը: Իմ այս գնահատականը երբեք չի նշանակում, թե Սարգսյանի որոշ մոտեցումների եւ եզրակացությունների կապակցությամբ լուրջ վերապահումներ չուեն:

- Շարունակելով՝ Վ. Վ.-ն «անհամաձայնություն» է հայտնում իմ մոտեցումներին՝ «պատմագիտական եւ քաղաքագիտական առումով» (էջ 68): Յուրաքանչյուր ոք կարող է համաձայնել կամ չհամաձայնել իմ տեսակետներին: Դա ազատ մարդու բացարձակ իրավունքն է: Ինչպէս

նշեցի, ես եւս համաձայն չեմ Կ. Սարգսյանի վերոհիշյալ գրքի որոշ դրույթներին ու եզրակացություններին, սակայն դա չի խանգարում անաչառորեն գնահատելու նրա կատարած աշխատանքը՝ առանց սեւացնելու հիվանդագին ձգտումի:

- Վ. Վ.-ն ինձ մեղադրում է եւս մեկ անհիմն «ամբաստանությամբ»: Նա գրում է. «...ականատեսների, ժամանակակիցների (առավել եւս, երբ դրանք ոչ շատ հայտնի դեմքեր են...) կցկտուր, ոչ լիովին, ամբավարար չափով համոզիչ եւ առավելապէս հպանցիկ տպավորությունները, էլ չենք ասում վերամբարձ, առարկություն չընդունող «դատողությունները» » իր-րեւ թե հիմք եմ ընդունել, ինչը «չի կարելի» (էջ 68-69), որին ավելանում են ինձ վերագրվող այլ մեղքեր՝ «առաջադրվող կարծիքը ընթերցող հասարակությանը պարտադրելն» ու դա «էնոցիոնալ՝ զգացմունքային երանգներով համեմելը» (էջ 69):

Այսինքն՝ ըստ Վ. Վ.-ի՝ պետք է ընդունենք, որ ոչ միայն Վահե Արծրունին, Եղիշե Պահլավունին, Սեպուհի բրիգադի Անանուն օրագրողը եւ այլք, այլեւ նախարար եւ կառավարության լիազոր Բաբայանը, նահանգապետեր Դորղանյանն ու Սասունին, մինիստր-նախագահներ (վարչապետ) Խատիսյանն ու Վրացյանը եւս հայտնի դեմքեր չէին առաջին հանրապետության մեջ: Կատարյալ անհեթեթություն... Իսկ հիշյալ անձանց դատողությունները հիմնված են բազմաթիվ փաստացի տվյալների վրա, եւ նրանց վկայությունները լրացնում են միմյանց:

Ինչ վերաբերում է իբր հասարակությանն իմ պարտադրած տեսակետներին, դա վանիկվիրաբյանական հերթական աճապարություն է: Այո՛, գրքույկում տեղ եմ տվել որոշակի զգացմունքայնության, քանի որ, ինչպէս նշել եմ աշխատության առաջաբանում. «Այս ուսումնասիրութիւնը պատմագիտական հետազոտութիւն չէ դասական իմաստով, այսինքն՝ ակադեմիական սխոլաստիկ աշխատանք չէ: Դա այնպիսի գործ է, որն արտացոլում է իմ հաւատամքը, թէ «գիտութիւնը, արուեստը, մշակոյթը եւ, առհասարակ, ամեն ինչ ոչ միայն պէտք է, այլ պարտաւոր է ծառայել ազգի եւ ազգային պետութեան շահերին»: Հետեւաբար ընթերցողն այս ուսումնասիրութեան որոշ տեղերում կհանդիպի ոչ ակադեմիական, այլ անլի շատ հրապարակախօսութիւն յիշեցնող գրելաոճի: Դա բխում է այս ուսումնասիրութիւնը կատարելու եւ, ամենակարեւորը, այն հրապարակելու բուն նպատակից՝ զգուշացնել հայ հասարակութեանը գալիք արհաւիրքից» (էջ 3): Այսինքն՝ հստակորեն նշել եմ, որ գրքույկը զուտ պատմագիտական չէ, այլ գիտահանրամատչելի, նույն էլում ծանոթագրության մեջ հստակեցրել եմ. «Գիտական ոճը պահպանել ենք այս գրքույկի կըրճատ տարբերակում, որը լոյս է տեսել քաղաքական գիտութիւնների դոկտոր Արմէն Այվազեանի կազմած ու խմբագրած «Ռազմավարութեան եւ անվտանգութեան հարցեր» յօդուածների ժողովածուում (Երեւան, 2007), էջ 481-549»:

- 4. 4.-ն շարունակում է իմ հասցեին իր մեղադրանքների հեղեղը՝ հայկական երեք հանրապետությունների առանձին գործիչների «միանգամայն անտեղի, միակողմանի եւ անձնավորված, խիստ «եսական» պիտակավորումը, որոնք երբեմն էլ պարզապես վիրավորական բովանդակություն ունեն» (ընդգծումը 4. 4.-ինն է - Գ. Յ., էջ 69):

Առաջին հանրապետության մի շարք, հատկապես ռազմական գործիչների նկատմամբ իմ որոշակի բացասական դիրքորոշման հիմքերն ընթերցողը կգտնի իմ գրքույկում, ուստի հարկ չկա այստեղ դրանք ներկայացնելու: Երկրորդ հանրապետության գործիչներից էջատակի ծանոթագրություններում քննադատել եմ գրող Նաիրի Զարյանին ու պատմաբան Զարություն Թուրջյանին՝ Դանիել բեկ Փիրույանին միանշանակ գերազնահատելու համար: Երրորդ հանրապետության գործիչներից էլ էջատակերում անվանապես անդրադարձել եմ մշակույթի նախարարի պաշտոնն զբաղեցրած Դավիթ Դավթյանի եւ Զասմիկ Պողոսյանի, գեներալ-մայոր Զայկ Քոթանջյանի, ԶԳ վարչապետ Սերժիկ Սարգսյանի եւ ԶԳ նախագահ Ռոբերտ Քոչարյանի անթույլատրելի արարքներին կամ տեսակետներին: Ըստ երեւոյթին 4. 4.-ն բնական է համարում, որ ԶԳ մշակույթի նախարարն ատրճանակով խուլիզանություն անի, նրան այդ պաշտոնում փոխարինած տիկինը պետական լեզուն անարգի, ԶԳ բանակի գեներալի որդիները ծառայեն ՆԱՏՕ-ին (այսինքն՝ ԶԳ-ի եւ հայության թշնամի պետության՝ Թուրքիային), որ ԶԳ վարչապետ եւ նախագահի թեկնածու Սերժիկ Սարգսյանի հավաստմամբ՝ Աղդամը (այսինքն՝ Զյուսիսային Արցախը) երբեւէ Զայաստանի մաս չի եղել, իսկ ԶԳ նախագահ Ռ. Քոչարյանը Զայաստանը համեմատի... զուգարանի հետ (մեղա՛, մեղա՛ Արարատին): Դե՛հ, եթե այդպես է, ասելիք չունեն: Ամեն հայանուն արարած կամ ինքն իրեն հայ հայտարարող անհատ նույն արժեհամակարգը չունի այսօր...

Անձնական գրույցի ժամանակ 4. 4.-ն վրդովված հարցրեց ինձ, թե ի՞նչ իրավունքով եմ Սերժ Սարգսյանին Սերժիկ անվանել: Զարցը տըվեց եւ չուզեց պատասխանը լսել: Ոչ թե ցանկացել եմ նսեմացնել պարոն վարչապետի արժանիքները (նման խնդիր չունեմ. յուրաքանչյուր անհատ ինքն է իրեն բարձրացնում կամ նսեմացնում իր գործունեությամբ), այլ հստակորեն ուզեցել եմ ցույց տալ, որ նրա ծնողները նրան «Սերժիկ» անունը շնորհելիս չեն գիտակցել անձնանունների՝ հայկական արժեհամակարգի կարեւոր բաղադրիչ լինելը: Ցավոք, դա գիտակից հասակում չի ըմբռնել նույնինքն պր Սարգսյանը. եթե նա օրինական կարգով իր անունը փոխել է Սերժի, ինչո՞ւ չի ձեռքազատվել իր օտար անունից, մանավանդ գլխավորում է ինքն իրեն մոլեհիյան եւ ցեղակրոն, այսինքն՝ ազգայնական հռչակած մի կուսակցություն, որտեղ իր տեղակալներն ունեն հայկական կամ այդպիսին ընկալվող անուններ՝ Ռազմիկ, Գալուստ, Տիգրան, Մուշեղ... Միակ բացատրությունն այն է, որ, ինչպես 4. 4.-ն, Ս. Սարգսյանն էլ Սերժիկի «իկ» մասնիկը ընկալել է ոչ թե օտարաբանություն,

այլ հայերեն... Դա ավելի եւս աններելի է մասնագիտությամբ բանասեր պրն Սարգսյանին եւ պատմաբան 4. 4-ի արքայանին:

- 4. 4.-ն շարունակում է ինձ մեղադրել ԶԳ բանակի գեներալների նկատմամբ բացասական կարծիքներ հայտնելու համար՝ «պարզապես հենվելով մի քանի չափազանց կցկտուր, համատեքստից կտրված մանր-մունր տվյալների եւ պատմագիտական լուրջ ու հիմնավոր փորձաքննության չենթարկված հուշերի, հիշողությունների ... վրա»՝ փակագծերում հայտնելով, թե «երբեմն հասկանալի պատճառներով մարդկային այդ հիշողությունը «մոռացվոտ» է լինում, եւ վերաբերմունքային առումով ընտրովի», ավելացնելով՝ «կարելի է հիշել նպատակահարմար ամեն մի բան, որը ոչ միշտ է նպատակահարմար լինում» (էջ 69):

Մի կողմ թողնելով վերջին նախադասության մեջ տրամաբանական ակնհայտ հակասությունը («նպատակահարմար ամեն մի բան ոչ միշտ է նպատակահարմար լինում»), հայտնեմ, թե այդ հուշերը, ինչպես նշեցի վերելում, «փորձաքննել» եմ ուրիշ հուշագրողների, փաստերի եւ փաստաթղթերի վկայություններով: Ավելորդ չէ այս առթիվ հայտնել, թե այդ հուշերի մեծագույն մասը գրել են թարմ տպավորություններով՝ 1920-ական թվականներին (Բաբայան, Խատիսյան, Սասունի, Ղուղանյան), երբ նենգափոխելու հնարավորությունները նվազագույնն էին: Օրինակ՝ ի՞նչն է անհասկանալի Խատիսյանի՝ «Բանակի դժբախտութիւնն էր հայ զինուորութիւնը... Զայ սպան խորթ էր իրեն ենթակայ հայ զինուորին եւ յաճախ նոյնիսկ չէր էլ հասկանում նրա լեզուն» ցավալի հաստատման մեջ («Զայրեմիք» անսագիր, Բոստոն, 1925 թ., հուլիս, թիվ 9, էջ 105): Առաջին հանրապետության պետական առաջին դեմքի՝ Ա. Խատիսյանի այս հաստատումն էլ է «չափազանց կցկտուր», «մանր-մունր տվյալ»...

- 4. 4.-ն շարունակում է տեղալ իր քմահաճ «մեղադրանքները», որ իբր ես «չհիմնավորված (սա 4. 4.-ի ամենասիրած բառն է - Գ. Յ.) եւ պատմագիտորեն, քաղաքականապես որոշակի առումով չարդարացված փորձեր» եմ անում «խմբապետականությունը եւ խմբապետներին ավելի բարձր դասել կանոնավոր հայկական բանակի զորապետությունից» (էջ 69-70):

Սա պարզապես կեղծիք է, որը հիշեցնում է թուրքական պատմա-չինարարության զինանոցի հիմնական գեներ: Ընթերցողն իմ գրքույկում կգտնի բազմաթիվ փաստեր, որոնք ցույց են տալիս իմ բացասական վերաբերմունքը մաուզերիստներին եւ խմբապետականությանը: Բավական է ասել, որ թալանի հարցում մեծ է եղել խմբապետների եւ նրանց «ընկեր տղերքի» «ներդրումը» (տե՛ս իմ գրքույկը, էջ 91-93): Թալանողների մեջ եղել են նաեւ զնդապետներ ու գեներալներ: Դետեաբար ինչպե՞ս կարելի է թալանչիների այս կամ այն խմբին բարձր դասել մյուսներից...

- 4. 4.-ն կարծում է, որ Սեպուհի դերակատարումը «չափազանց-րել» եմ, ինչը «ոչնչով հիմնավորված չէ» (էջ 70):

Սա եւս խեղաթոյրում է: Սեպուհին պարզապէս ներկայացրել են անաչառ, ինչպէս մյուսներին: Փաստ է, որ Սեպուհը տվյալ ժամանակահատվածում իրեն լավ է դրսեւորել, եւ որոշ շրջանակներ առաջարկում էին նրան կամ Դրոյին նշանակել ԶԶ բանակի գլխավոր գորահրամանատար:

- Վ. Վ.-ն ինձ մեղադրում է, որ իբր աշխատել եմ «ԶԶ բանակի գեներալների եւ գեներալների բացարձակ մեծամասնութեանը նսեմացնել» եւ «վարկաբեկել» (էջ 70):

Նման խնդիր երբեւէ չեմ ունեցել եւ չունեմ, քանի որ նրանց մեծ մասը, եզակի բացառություններով, ինքն իրեն վարկաբեկել էր եւ նսեմացրել (բավարար է նշել միայն թաւանի «գործում» նրանց մի մասի զըլխովին խրվելը, այդ եպերելի երեւոյթի նկատմամբ մյուսների մեծ մասի անտարբերությունը կամ անկարողությունը): Իմ գրքույկի 88-րդ էջի 348-րդ ծանոթագրությունում գրել եմ. «Գեներալ Դանիէլ-բէգ Փիրումեանը տիպիկ օրինակն է այն հերոսի, որը, չդիմանալով գայթակղութիւններին, հեշտութեամբ ընտրում է անբարոյականութեան ուղին եւ այդ ճանապարհով ընթանում դէպի սեփական անձի եւ սեփական ազգի կործանում: Այստեղ արժէ յիշել Նժդէհի իմաստուն միտքը. «Կեանքում դժուար է հերոսանալը, բայց աւելի դժուար է հերոս մնալը, իսկ է՛լ աւելի դժուար՝ հերոս մեռնելը»»:

Կարծում եմ՝ չարժե ասվածին ինչ-որ բան ավելացնել: Պարզապէս վանիկվիրաբայանների ուշադրությունն եմ հրավիրում Փիրումյանին իմ տված «հերոս» որակմանը: Դանիէլ բէկ Փիրումյանն իսկապէս հերոսական գործ կատարեց Սարդարապատում, սակայն գայթակղությունները, սա խոր ցավով եմ արձանագրում, նրան տարան սխալ ճանապարհով: Սա է իմ շեշտել ուզածը եւ ոչ թէ Փիրումյանի ու մյուս անձանց (որոնց մի մասը, հատկապէս Նազարբեկյանն ու Սիլիկյանը նմանապէս հերոսական դերակատարություն ունեցան 1918 թ. մայիսյան գոյամարտերի ժամանակ) նսեմացումը կամ վարկաբեկումը:

- Վ. Վ.-ի կարծիքով՝ ես իբր պնդել եմ, որ եթէ Սեպուհի բրիգադի միավորումները ժամանակին տեղափոխվեին Կարսի ռազմաճակատ, ապա «հոկտեմբերի 14-ի հայկական հակահարձակումը կարող էր այլ լինել» (էջ 70): Այա ավելացնում է. «Եթեները, կարծում ենք, չափազանց շատ են» եւ «տառապում են սակավափաստությամբ եւ արված եզրահանգումների անավարտունությամբ ու անլիարժեքականությամբ» (էջ 70):

Սինչդեռ ես գրել եմ հետեւյալը. «Եթէ Սեպուհի բրիգադի միավորները Իգդիրից եւ Դիլիջանից հասած լինէին Կարսի ռազմաճակատ եւ օգտագործուէին Կարաբէքիրի զօրքի թոյլ կէտերին հարուածելու համար, ԶԶ բանակի հակայարձակման ճակատագիրը, մեծ հաւանականութեամբ, այլ կլինէր» (էջ 41-42): Ձեռնածությունն ու խեղաթոյրումներն ինձ «ջնջելու»

գործում աշխատանքային տեխնոլոգիայի վերածած Վ. Վ.-ն ընթերցողին հավանաբար դրել է հիմարի տեղ՝ իմ գրածի մեջ «մեծ հավանականությամբ» բառերի փոխարեն «պնդում» բառը գործածելով: Տրամաբանություն կոչվող գիտության տարրական օրենքներին գրեթէ անտեղյակ Վ. Վ.-ին հայտնեմ, որ ինչ-որ բան պնդելու համար հավանականությունը պետք է ոչ թէ մեծ լինի, այլ հավասարվի 100 տոկոսի:

Ինչ վերաբերում է իմ գործածած «եթէ»-ների իբր շատութեանը, ապա խորհուրդ կտայի իսկապէս կարդալ իմ գրքույկը եւ հաշվել այդ «եթէ»-ները: Իսկ իմ փաստարկներին Վ. Վ.-ի տված անհիմն որակումներին անդրադառնալը ավելորդ եմ համարում:

- Վ. Վ.-ն եւս մեկ պնդում է վերագրում ինձ, այն որ «ակադեմիական» կրթությամբ զինվորականները հարվածի սխալ տակտիկա էին ընտրել, իսկ նույնպիսի կրթություն չունեցող Սեպուհը «իբր թե» առաջարկեց այն, ինչ ընտրեց Կարաբէքիրը հոկտեմբերի վերջին օրերին (էջ 70):

Նախ՝ «իբր թե» բառակապակցությունը չկա իմ շարադրանքում: Վ. Վ.-ն ինքն է համաշարադրանքից հանել իմ միտքը, որը շարունակվում է իր՝ խեղաթոյրյալ մեջբերած հատվածից անմիջապէս հետո. «Խոսքը տանք Սեպուհի մոտ ծառայած անանուն օրագրողին, որը հոկտեմբերի 14-ին նշել է հետեւյալը» (Ա. Այվազյանի խմբագրած ժողովածուն, էջ 503): Այստեղ շատ հստակ ասված է, որ գրառումը կատարվել է հոկտեմբերի 14-ին, այսինքն՝ մասների մասին այդ կարծիքը Սեպուհն ունեցել է դեռեւս հոկտեմբերի առաջին կեսին եւ ոչ թէ հոկտեմբերի վերջից հետո, որը Վ. Վ.-ի թեթեւ ձեռքով վերածվել է «իբր թե» կարծիքի:

- Վ. Վ.-ն, հակադրվելով գորահրամանատարների ուշացած փոխարինումների մասին իմ տեսակետներին, կատարում է հերթական «հայտնագործությունը»: Գեներալ Արտյոմ Յովսեփյանին դատի տալու առնչությամբ Վ. Վ.-ն նշում է, թէ իբր ես գրել եմ այս գեներալի նկատմամբ Դրոյի բարեհաճ վերաբերմունքի մասին՝ «որպէս փաստ ընդունելով Վահե Արծրունու վկայակոչումը, չբերելով այլընտրանքային եւ լրացուցիչ այլ, ավելի հիմնավոր եւ ծանրակշիռ փաստարկներ» (էջ 71):

Վ. Վ.-ն, էջատակի ծանոթագրության մեսրոպատառ հայերեն շարադրանքը երեւի հիմեզիպտական հիերոգլիֆ համարելով, հեղինակի անունը շամպոլիոնաբար «վերծանել» է Վահե Արծրունի, մինչդեռ հստակ գրել եմ, որ այս տեղեկության հիմքը ժամանակի խնամատարության նախարար եւ Կարսում ԶԶ կառավարության լիազոր, այսինքն՝ օրվա անցուդարձերին քաջատեղյակ Արտաշէս Բաբայանի՝ Բոստոնի «Յայրենիք» ամսագրի 1923 թ. 12-րդ համարում հրապարակած հուշագրությունն է: Կարծում եմ, որ նման անձի վկայությունը բավարար էր հիշյալ տեղեկությունն իմ գրքույկում ընդգրկելու համար՝ առանց «այլընտրանքային եւ լրացուցիչ ... փաստարկների»:

- Ըստ Վ. Վ.-ի՝ իբր իմ կարծիքով՝ առաջին հանրապետության կարճատև շրջանում հնարավոր էր ունենալ «անթերի բանակ, եւ այն ստեղծելիս հենվելով ոչ թե կանոնավոր զինվորական կրթություն ստացած սպաների, այլ խմբապետների վրա» (էջ 71):

Ստորագույն կեղծիք: Այնքան մանկամիտ չեմ, որ կարծեմ, թե 2.5 տարվա ընթացքում կարելի էր «անթերի բանակ» ստեղծել: Համոզված եմ սակայն, որ քաղաքական կամքի առկայության դեպքում ավելի նվազ ժամանակամիջոցում կարելի էր ունենալ ավելի բարոյական եւ ազգային, ավելի անբասիր նկարագիր ունեցող հրամանատարական կազմով բանակ, որ, ցավոք, չունեցանք եւ մեր ձեռքով փորեցինք մեր գերեզմանը: Անհամեստորեն հայտնեմ, որ զինվորական գործում Վ. Վ.-ից ավելի փորձառու եմ, հետեւաբար չէի կարող կարծել, թե կարելի է խմբապետների միջոցով կանոնավոր բանակ ստեղծել: Իսկ եթե Վ. Վ.-ն նման բան է յայտնաբերում իմ գրքույկում, դա մտահոգող լուրջ խնդիր է...

- Վ. Վ.-ն գրում է, որ իբր ես «համոզվածությամբ կարծում» եմ, որ եթե հայազգի բարձրաստիճան սպաները ծանոթ լինեին հայ ռազմարվեստին, այդ իմացությունը «հայ զինվորականությանը եւ զորքին անպարտելի էր դարձնելու» (էջ 71):

Նախ՝ «համոզված լինելն» ու «կարծելը» տարբեր հասկացություններ են, երկրորդ՝ նման տեսակետ չկա իմ գրքույկում: Պարզապես գրել եմ, որ եթե այդ սպաները տիրապետեին հայոց լեզվին, իմանային հայկական ազգային արժեհամակարգն ու ռազմարվեստը, մասնավորաբար հայ զինվորականի պատվո վարքականունը եւ հայ ռազմուժի պատմությունը, ապա հավելյալ ոգեղեն ուժ ձեռք կբերեին թշնամիներին դիմակայելու հույժ պատասխանատու գործում: Համաձայն եմ Վ. Վ.-ի այն մտքին, որ նրանք (իմ համոզմամբ՝ նաեւ ՀՀ բանակի յուրաքանչյուր սպա) պետք է խորամուխ լինեն ռազմարվեստի համաշխարհային, մասնավորաբար թշնամի բանակների փորձին, սակայն, իմ համոզմամբ, նրանք դա պետք է անեն սեփական ազգի ռազմական պատմության ոչ միայն իմացությամբ, այլեւ հիմնարար տիրապետմամբ ու տվյալ իրավիճակին ստեղծագործաբար հարմարեցնելով: Հենց վերջիններից գրեթե զուրկ էին առաջին հանրապետության բանակի բարձրագույն հրամանատարները, եւ, ցավոք, այսօր էլ դրանց իմացությամբ առանձնապես չեն փայլում մեր բանակի բարձրագույն հրամակազմի որոշ ուսադիրավորներ, իրողություն, որից հարկավոր է անհապաղ ձերբազատվել (իմ զոհացումն է այն փաստը, որ ՀՀ այսօրվա պաշտպանության նախարարի ելույթները հայերեն են, թեւ ռուսերենի առոգանությունն զգալի է, կարծում եմ՝ ժամանակի ընթացքում այն կնահանջի, եթե պրն Սիքայել Հարությունյանը շարունակի խոսել եւ, անենակարեւորը, մտածել հայերեն):

- Ըստ Վ. Վ.-ի՝ իբր գրել եմ, թե ՀՀ բանակի բարձրագույն հրամանատարները «էթնիկական երկատվածության վիճակում էին գտնվում» (էջ 71):

Իմ գրքույկի 23-րդ էջում շատ պարզ գրել եմ. «Նրանց մէջ չէր նկատուում նոյնիսկ «էթնիկական երկատվածութեան» երեւոյթ»: Մի խոսքով՝ հավատարիմ իր մեթոդին, Վ. Վ.-ն գլխովին շուռ է տվել իմ արտահայտած տեսակետը:

- Լեզվի հարցում եւս Վ. Վ.-ն դիմում է անթուլատրուի հնարքների: Այսպես՝ գրում է, թե «կարելի է մասամբ համաձայնվել այն մտքի հետ, որ հայերեն չիմացող մարդուն չի կարելի հայ համարել, սակայն անենեւին չենք կարող համաձայնվել այն վարկածի հետ, թե լեզուն է պայմանավորում հայ զինվորի ու սպայի, հայ զորքի մարտունակությունը...» (էջ 71): Ըստ Վ. Վ.-ի՝ ես «նման փաստարկվածությունը» «թեթեւ ձեռքով տարածել» եմ Հ. Հախվերդյանի, Թ. Նազարբեկյանի, Մ. Սիլիկյանի եւ այլոց վրա (էջ 71-72):

Վ. Վ.-ն ընկել է իր իսկ լարած թակարդը, երբ մասնակիորեն համաձայն է «հայերեն չիմացող մարդուն չի կարելի հայ համարել» կարծիքին, որը, ըստ երեւութի, ինձ է վերագրում: Իրականում այդ տեսակետը թերի է: Խոսքը լիարժեք հային է վերաբերում, որին անհնար է պատկերացնել առանց հայերենի իմացության եւ հայերեն լեզվամտածողության: Իմ գրքույկում որեւէ տեղ «հայերեն չիմացող մարդուն չի կարելի հայ համարել» արտահայտություն չկա: Վ. Վ.-ն հերթական անգամ շուռումուռ է տվել Արտ. Բաբայանի մի պնդման առնչությամբ իմ գրածը. «Ոչ հայերենաւեր, ազգային լեզուն արհամարհող հայազգի արարածը չի կարող հայ համարուել» (տե՛ս իմ գրքույկը, էջ 23, ծան. 62): Շատ հստակ եմ գրել. *խոսքը վերաբերում է ոչ թե հայերեն չիմացող անհատին, այլ հայերենը արհամարհողին*, իսկ դրանք բավական տարբեր հասկացություններ են: Սյուս կողմից՝ մի անգամ եւս շեշտեմ իմ համոզմունքը, որ *հայ անհատի մարտունակությունը որոշակիորեն պայմանավորված է հայկական արժեքային համակարգի (այդ թվում՝ մայրենի լեզվի) նրա ընկալունակության եւ դրանից բխող՝ իր ազգի հետ անձի հոգեբանական նույնականացման աստիճանով*: Եթե Վ. Վ.-ն այս հարցում համաձայն չէ, դա իր խնդիրն է: Այդ դեպքում թող ինձ ներվի կասկածի տակ առնելու նրա գրքույկի առաջին հատվածում հայոց լեզվի կարեւորության մասին նրա շարադրած մտքերի անկեղծությունը:

Ինչ վերաբերում է հիշյալ զինվորականների՝ հայոց լեզվով չխոսելուն, ոչ թե նրանց վրա եմ տարածել «նման փաստարկվածությունը», այլ առանց բառերը ծամծմելու դատապարտել եւ հիմա էլ խստորեն դատապարտում եմ անարգական մոտեցումը հայերենի, այսինքն՝ հայկական մեր երկու անկախ հանրապետությունների պետական միակ լեզվի նկատմամբ: Այո՛, *հայոց լեզուն անարգող հայազգի արարածին հայ չեմ*

**համարում:** Ինձ համար սա աքսիոն է, անքննելի ճշմարտություն: Այդ սկզբունքով՝ ՀՀ քաղաքացի, ազգությամբ հայ ռոբերտսահակյանցներին, ալեքսանդրիսկանդարյաններին եւ նմաններին հայ չեմ համարում: Վիրաբյանների համար իմ այս պնդումները (այո՛, պնդումները) կարող են անընդունելի լինել, ծայրահեղական թվալ եւ այլն, դա իրենց խնդիրն է:

- Վ. Վ.-ն «կարծոտ վարկած» է հայտարարում այն փաստը, թե ապաշնորհ բարձրաստիճան զինվորականներին հովանավորում էր զորաց նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը (էջ 72):

Սա այնպիսի հանրահայտ փաստ է, մեջբերված համարյա բոլոր հուշագրողների գրություններում, որ չեմ անդրադառնում դրան՝ «կարծոտ վարկած» որակման պատմագիտական պատասխանատվությունը թողնելով դրա հեղինակի խղճին:

- Ըստ Վ. Վ.-ի՝ իբր իմ կարծիքով՝ «Առաջին Հանրապետության օրոք առհասարակ շնորհալի քաղաքական-ռազմական առաջնորդներ եւ գորապետեր, արհեստավարժ սպաներ չեն եղել» (էջ 72):

Նման բան չեմ գրել: Ընդհակառակը, արհեստավարժ սպաներ շատ-շատ են եղել, բայց անհրաժեշտ ուրիշ արժանիքներից (ազգային արժեհամակարգի եւ բարոյական վարքականոցի իմացություն ու դրանցով պայմանավորված կենսակերպ եւ այլն) զուրկ: Մյուս կողմից՝ իմ շարադրանքում նշել եմ մի քանի շնորհալի առաջնորդների անուններ, սակայն այդ օրերի անբարոյականացած պետական համակարգը նրանց հնարավորություն չի տվել տիրել ղեկավար եւ որոշիչ լծակների, որպեսզի կարողանար անարգել շարունակել ցոփությունը: Այսօր էլ վիճակը մոտավորապես նույնն է. հիմնականում շնորհների են արժանանում ոչ թե իսկապես շնորհալիներն ու գործիմացները, այլ քծնողները, սողացողները, կաշառառու-կաշառատուները, ամենաստոր հատկանիշներով «օժտված» արարածները... Սա՛ է դատապարտելին: Այդուհանդերձ, սա երբեք չի նշանակում, թե երրորդ հանրապետության պետական համակարգում բարեխիղճ, ազգասեր պաշտոնյաներ չկան, թե հայ արգանդը դադարել է արժանավոր զավակներ ծննդաբերելուց: Այդպիսիք բարեբախտաբար շատ-շատ են: Պարզապես լծակատեր թերմացքը նրանց զրկում է ազգին եւ հայրենիքին լիարժեք ծառայելու հնարավորությունից:

- Վ. Վ.-ն ինձ «մեղադրում» է Հայոց բանակում տեղ գտած «առաջնային եւ ոչ առաջնային թերությունների» վրա «չհիմնավորված շեշտադրում» կատարելու համար, այդ թվում՝ քարտեզների բացակայությունը՝ «առանց կոնկրետ եւ իրական փաստարկումների», ինչպես նաեւ «ռուսական շաբլոնի կիրառումը (կարծես թե սեփականը կար, կամ էլ թե կարելի էր հապճեպ, մեկ կամ երկու օրում, մի քանի ամսում այն ստեղծել, իսկ եթե ոչ՝ զոնե պետք է ընդօրինակվեր որեւիցե այլ երկրի փորձը...)» (էջ 72):

Այս արտահայտության մեջ «չհիմնավորված» որակումն ինքն է չհիմնավորված, քանի որ բազմաթիվ հիմնավորումներ են բերել իմ աշխատության մեջ: Քարտեզների հարցում էլ երկու փաստ են բերել (ուսումնասիրության ծավալի սահմանափակությունը հնարավորություն չէր տա ավելի փաստեր մեջբերելու, դրա կարիքը չկար էլ), հետեւաբար այս հարցի մասին Վ. Վ.-ի գրածը, մեղմ ասած, հերթական անգամ չի համապատասխանում իրականությանը: Նա ինքն է հասպճեպություն դրսևորել եւ իմ գրքույկում քննարկված «ռուսական շաբլոնի կապկում» արտահայտությունը (էջ 52) վերածել «ռուսական շաբլոնի կիրառումի»: Եթե Վ. Վ.-ն չզիտե «կապկում», «կիրառում» եւ «ընդօրինակում» բառերի տարբերությունները, կարող է դիմել բառարանի օգնությանը: Մի անգամ եւս ստիպված եմ անհամեստորեն ասել, որ ռազմական գործին ավելի են իրազեկ, քան Վ. Վ.-ն, եւ հասկանում եմ, որ հայկական բանակը (ինչպես եւ յուրաքանչյուր բանակ) պետք է ունենա իր սեփական մոդելը: Նաեւ հասկանում եմ, որ դա անհնար է ստեղծել «մեկ-երկու օրում կամ մի քանի ամսում»: Իմ ուսումնասիրության մեջ խոսքը ռուսական բանակի կառուցվածքը *նույնությամբ կապկելու* մասին է: Իհարկե, եթե սեփականը չունեինք, պետք է օտարինը վերցնեինք, տվյալ դեպքում մեզ ինչ-ինչ պատճառներով ավելի հարմարող ռուսական կառուցվածքը (իմ կարծիքով՝ մերոնք ճիշտ են արել, որ քաղաքավարությամբ մերժել են բրիտանական բանակի հրահանգիչներ ունենալու անգլիացիների առաջարկը): Սակայն, ՀՀ բանակի կառուցվածքը պետք է ստեղծեին ոչ թե ցարական ու դեմիկիմյան բանակների ռուսագզի սպաները, այլ հայագզի, այն էլ՝ միայն եւ միայն հայկական, մասնավորաբար հայ զինվորի յուրահատուկ հոգեբանության, հայ ազգի խնդիրների, Հայաստանի տեղագրության, թուրք թըշմամու հայաջինջ նպատակի եւ բազմաթիվ այլ գործոնների հաշվառմամբ՝ մինչեւ ստեղծվեր զուտ հայկական տարբերակը, ընդ որում, ընդգծում եմ՝ հաշվի առնելով համաշխարհային փորձը եւ ստեղծագործաբար օգտագործելով այն, այլ ոչ թե կապկելով: Վ. Վ.-ն չի ուզեցել իմ գրքույկում սա՛ տեսնել: Դե, ինչպե՞ս տեսներ, եթե հենց սկզբից նրան առաջնորդել է խեղաթյուրման մոլուցքը՝ անձս ամեն գնով վարկաբեկելու գերխնդիր ունենալով:

- 9.5 էջ գրել-մոտոտելուց հետո, Վ. Վ.-ն իրազեկում է. «Կարելի է երկար շարունակել, բայց կարծում ենք, պետք է բավարարվել ասվածով, հետագա ասելիքը թողնելով ապագային, երբ հարկ կլինի ավելի մանրագնին, ավելի ամբողջական եւ հիմնավորված գնահատականներ տալ եւ անհրաժեշտ եզրակացությունների գալ...» (էջ 72-73):

Սպասենք հերթական կեղծիքների՞, թե՞ Վ. Վ.-ն որոշ եզրակացությունների կհանգի սույն հրապարակումից հետո...

- Բայց, ոչ, պարզվում է՝ Վ. Վ.-ն դեռ ասելիք ունի, եւ այն էլ ինչպիսի՞ «մարգարիտներ», որ վերապահել է իր ամբաստանագրի ավար-

տին, որով եւ բացահայտել է իր թաքուն նպատակը սույն «հետգրության» հեղինակմամբ ու հրատարակմամբ: Դա մեկ անգամ եւս հաստատում է նրա՝ ինձ վերագրած «պատվերային բնույթի» եզրակացությունը հայկական հետախուզական ծառայության չգոյության վերաբերյալ: Ըստ նրա՝ ես «բոլորովին անհարկի տեղը քուրդ ծախորդությունների, անհաջողությունների եւ ցավալի սայթաքումների ու խայտառակ պարտությունների մեղքը ՅՅ զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Յետախուզական եւ հակահետախուզական բաժանմունքի վրա» եմ բարդել (ընդգծումը իմն է - Գ. Յ., էջ 73):

Նախ՝ Վ. Վ.-ն մոռացել է այն տարրական փաստը, թե գլխավոր շտաբ ունենում են զինված ուժերը (բանակները) եւ ոչ թե զինվորական նախարարությունները (այս փաստը մի անգամ եւս հաստատում է, թե առաջին հանրապետության ուժային կառույցների պատմության մասնագետ Վ. Վ.-ն որքան է հասկանում բանակային գործից):

Երկրորդ՝ վերոբերյալ արտահայտությամբ նա հակասում է ինքն իրեն, քանի որ իմ գրքույկում ներկայացրել եմ ու քննարկել խորքային 28 պատճառ (երբեմն իրենց ենթապատճառներով), որոնցից ընդամենը մեկն է ներկայացնում ժամանակի հայկական հետախուզության, շատ մեղմ ասած, անբավարար պատկերը: 2003-2004թթ.=2006թ. «հայտնագործության» հեղինակ Վ. Վ.-ն ինչո՞ւ չկատարի նաեւ 28=1 «գյուտը»:

Երրորդ՝ Վ. Վ.-ն նորից «մոռացել» է, որ մի քանի էջ առաջ ինձ մեղադրել էր հոգեբանական գործունը բացարձակացնելու համար (էջ 68), իսկ հետախուզության մասին ես գրել եմ ոչ թե Կարսի անկման հոգեբանական պատճառների, այլ զուտ ռազմական պատճառների եւ սխալների բաժնում: Այս «մոռացկոտությունը» պատահական չէ: Կարսի անկման բոլոր պատճառները հետախուզությանը եւ հակահետախուզությանը վերագրելու՝ ինձ ուղղված մեղադրանք հորինելով եւ հայկական հետախուզական ծառայության չգոյության «պատվերային բնույթի» եզրակացություն վերագրելով ինձ՝ Վ. Վ.-ն այսօրվա ՅՅ հատուկ ծառայություններին ուղղորդում է ... դեպի ինձ:

Յուսախաբ եմ անելու Վ. Վ.-ին ու վանիկվիրաբյաններին, որ հիշյալ ծառայությունները եւ նրանց նախորդները առնվազն 28 տարի առաջ են իմ անձով սկսել զբաղվել, հաստատվոր թղթապանակներում նյութեր կուտակել, բայց առ այսօր չեն կարողացել ինձ լուրջ մեղադրանք ներկայացնել, որովհետեւ որեւէ հիմք չունեն պարզապես: Յետեւաբար նա իզուր է աշխատում արջի ծառայություն մատուցել նրանց...

- Դեռ «ասելի՞ք» ունի Վ. Վ.-ն. «...անտեղի է նաեւ Կարսի դեպքերի համեմատելը Լեռնահայաստանի՝ Ջանգեզուրի հետ, քանզի պատճառահետեւանքային եւ պատմաքաղաքական հենքերն ու իրադրությունները բոլորովին այլ են, տարբեր շերտանստվածքներ ունեն» (էջ 73):

Վ. Վ.-ն երեւի չգիտե, որ, Նժդեհի գործունեությանը խորագիտակ լինելով, այդքան տարրական բան ես էլ գիտեմ: Սակայն նա չի ուզեցել տեսնել այն փաստը, որ այդ համեմատությունն արել եմ հոգեբանական գործունի արդյունավետության հենքով միայն: Իսկ եթե իր նշած հենքերով էլ քննարկելու լինեի հարցը, համեմատությունը լինելու էր միայն եւ միայն հոգուտ Լեռնահայաստանի քաջարի ժողովրդի եւ նրա պանծալի առաջնորդ Գարեգին Նժդեհի:

Ի մեծ հիասթափություն Վ. Վ.-ի՝ հայտնեմ, որ պատմ. գիտ. թեկնածու Կորիժ Սարդարյանն իր վերոհիշյալ գրքում հավելյալ փաստերով եւ փաստաթղթերով ապացուցում է իմ ուսումնասիրության տեղեկությունների գրեթե բոլորի ճշմարտացիությունը: Վ. Վ.-ին խորհուրդ կտայի կարդալ Կ. Սարդարյանի գիրքը (հատկապես 3-րդ գլուխը, էջ 110-159) եւ ... մի քիչ խորհել՝ այս կամ այն անձին մրոտելու նպատակով գրիչ վերցնելուց առաջ...

## Վերջաբան

«Երկար ժամանակ է վեր Շահան Շահնուր, Սփիւռքի գրականութեան ամենէն գլխաւորներէն մէկը, կը մնար դատապարտուած անտեսումի եւ մահուան: Շահնուր իր տեսակով սիրելի չէ մեր ժողովուրդի լայն զանգուածներուն: Այդ մէկը կը հասկնամ: Կը վրդովիմ եւ կը զարմանամ, կը բողոքեմ, բայց այդպէս է. մեր ժողովուրդը կը նախընտրէ այնպիսի կերպարներ, որոնք չեն մատնանշեր իր սխալները, այլ գովքը կը հիւսեն, կը խօսին իր յաղթանակներուն մասին ու կը մոռնան կամ առնուազն մոռցնել կու տան իր պարտութիւնները եւ ժողովուրդի խաչելութեան պատճառներուն մասին ընդհանրապէս չեն արտայայտուիր: Կոյր կը ձեւանան ու կը յայտարարեն, որ ամէն ինչ շատ լաւ է:

...Մտաւորական խիզախութիւն ցուցաբերած Շահան Շահնուրները օրէ օր կը պակսին մեր ժողովուրդէն, ու անոնց փոխարէն կը բազմանան մոլախիմղները, որոնք անպայմանօրէն ջուրին երեսը ծփալով ու հայ գիրի ու բանի գովասանքը հիւսելով՝ կու գան բացագանչելու, որ ամէն ինչ լաւ է, հայ՝ ժողովուրդ, քնացի՛ր, ամէն ինչ լաւ է:

Ո՛չ, ամէն ինչ լաւ չէ, պարոնայ՛ք: Նահանջը այսօր ալ կը հալածէ մեզ... Նահանջին փոխարէն գրողը, նաեւ Վարդան Մկրտիչեանը այս պարագային, կը հաւատայ կռուին, կռիւ՝ բաց աչքերով, կռիւ՝ անարդարի դէմ ու կռիւ՝ բազմաթիւ ճակատներու վրայ: ...

Երագողներուն մէջ ամենէն արին է Շահան Շահնուր, որովհետեւ իր ազգասիրութեան չափանիշը կը մղէ զինք ըսելու ամէն ինչ: Ան առանց

գովասանական ելոյթներու կը փշրէ հաւաքական իմացութեան հայելին ու կը փորձէ խոստովանութեան նստիլ, առնուազն պատմութեան առջեւ ու ապագային համար:

...Եւ այդ բողոքին մէջ մենք տեսանք, որ Շահան Շահնուր կամ Շահնուր Քէրէսթեճեան, որ կու գայ անցեալէն, խաղաղ ու ինքնավստահ հայեացքով աչքերը կը յառէ մեզի՝ հարց տալու համար, թէ ո՛ր ենք մենք այսօր» (Սազօ Արեան, «Վարդան Մկրտիչեան եւ Շահան Շահնուր», «Ազդակ» օրաթերթ, Բեյրութ, 2007 թ., 15 հունիսի):

Իսկապէս, ո՞ր ենք մենք այսօր:

Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի շրջանավարտ Վարդան Մկրտիչյանը հիշյալ մենաթատրոնում բառացիորեն փշրեց մեծ հայելին ու փշրանքները շարտեց ժողովրդի, ավելի ճիշտ՝ այդ պիտակով հավաքված խառնամբոխ-հանդիսատեսների վրա: Նույնը ես արել եմ իմ գրքուկով:

Կտրիճ Սարգսյանն իր գրքում «հայ քաղաքական կյանքի արատավոր երեւոյթն է» համարում «վախը ճշմարտության հանդէս» (ընդգծումը Կ. Ս.-ինն է - Գ. Յ., «Հայաստանը համաշխարհային հեղափոխության արեւելյան խաչմերուկում», էջ 18):

Ցավոք, ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ԾՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ-ից վախը, ավելի ճիշտ՝ սարսափը, խեղդում է հայ կյանքն ընդհանրապէս, ներառյալ հայ պատմագիտությունը...

Վ. Վ.-ին ու նրա նմաններին ոչ միայն խոստանում եմ, այլեւ երգվում՝ շարունակելու եմ փշրել հայելիները եւ փշրանքները խառնամբոխի երեսին շարտել: Այս ժողովուրդը ցեղելու այլ միջոց չկա. գոնե ես չգիտեմ:

Ազգի սերունգը թող չմտահոգվի. այդ փշրանքները նրան չեն հասնի: Թող մտահոգվի տականքը միայն...

7. Գ.- Ըստ հավաստի աղբյուրների՝ պատմ. գիտ. թեկնածու Վահիկ Վիրաբյանը վերջին շրջանում մի քանի անգամ դոկտորական ատենախոսություն պաշտպանելու ապարդյուն փորձեր է արել: Հիշյալ հրապարակումով ըստ երեւոյթին հույսեր է փայփայել զոնե այս կերպ հաջողության հասնելու: Դա եմ հուշում Վ. Վիրաբյանի գրքուկի պատասխանատու խմբագրի եւ 26-րդ էջում հիշատակվող «նշանավոր պատմաբանի» ինքնությունը: Երբեք չեն զարմանա, եթե մոտ ապագայում Վ. Վիրաբյանին դոկտորի գիտական աստիճանը շնորհեն: Գոնե այդ հարցում օգտակար եղած լինեն նրան...

### Հավելված

Երեւան, 24 դեկտեմբերի 2007 թ.

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պատմության եւ քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, պ. գ. թ. պրն Վանիկ Վիրաբյանին,

պատճենը՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պ. գ. դ. պրն Աշոտ Մելքոնյանին.

Պրն Վիրաբյան

Վերջերս պատահաբար իմ ձեռքն անցավ այս տարի ձեր հեղինակած ու հրատարակված «Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ» ուսումնասիրությունների ժողովածուն: Նրանում, գրքուկի ծավալի 10 տոկոսը (Գինեսի գրքում գրանցվելու արժանի մի ցուցանիշ), իբրեւ «հետգրություն», հատկացրել եք իմ հեղինակած ու հրատարակած «Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները» ուսումնասիրության «ջախջախման» պիտակի տակ իմ անձի արատավորմանը՝ խոստանալով «հետագա ասելիքը թողնել ապագային» (ձեր գրքուկը, էջ 73): Խեղաթյուրումներով լեցուն այդ «հետգրությանը» ես տալու եմ համարժեք եւ հրապարակային պատասխան (շատ հավանաբար՝ գրքուկի տեսքով)՝ ջրի երես հանելով ձեր անձի գործածած խեղաթյուրման մեթոդիկան, որը չի տարբերվում ադրբեջանա-թուրքական պատմաշինարարության մեթոդիկայից:

Սակայն մի հարցի դուք պարտավոր եք տալ հրապարակային պատասխան: Արդարեւ, 64-րդ էջում կարդում եմ, թե ես եկել եմ... «պատվերային» բնույթ կրող եզրակացության հայկական հետախուզության չգոյության» եւն մասին:

Դուք պարտավոր եք հրապարակայնորեն ապացուցել, թե այդ ի՞նչ պատվեր է, ո՞վ է կամ ովքե՞ր են պատվիրատուն(երը), այդ պատվերի դիմաց ինձ ի՞նչ են տվել կամ խոստացել եւ այլն: Այլապէս ստիպված եմ ՀՀ օրենսդրությամբ ինձ թույլատրված միջոցներով պատասխանատվության կանչել ձեր անձը՝ զրպարտանքի մեղադրանքով:

Պատրաստ եմ իմ անձնական միջոցներով ֆինանսավորելու ձեր «ապացույցների» հրապարակային տպագրությունը կամ այլապես հրապարակայնացումը:

Նկատի ունենալով մոտալուտ տոներն ու քննական ժամանակաշրջանը՝ ձեր հրապարակային «ապացուցումն» ակնկալում եմ ստանալ մինչեւ 2008 թ. փետրվարի 15-ը, որից հետո ինձ իրավունք եմ վերապահում վերոնշյալ զրպարտության կտրվածքով դիմել համապատասխան քայլերի:

Գեւորգ Յազըճյան (պ. գ. ք.)  
հեռ.՝ 091 – 78 – 88 – 47

*Ծանոթագրություն: Այս նամակը փիլ. գիտ. թեկնածու Աշոտ Պետրոսյանի ներկայությամբ 2007 թ. դեկտ. 24-ին անձամբ առձեռն հանձնել եմ պրն Վանիկ Վիրաբյանին: Կրկնօրինակը նույն օրը փոխանցել եմ պրն Ա. Սելբոնյանի քարտուղարուհուն:*

Երեւան, 16 փետրվարի, 2008 թ.

Պատրաստ եմ իմ անձնական միջոցներով ֆինանսավորելու ձեր «ապացույցների» հրապարակային տպագրությունը կամ այլապես հրապարակայնացումը: